

Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
հունվարի 5-ի N 25 - Լ որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԼԱԲՈՐԱՏՈՐ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՀՈՒՄՔԻ
ԵՎ ՆՅՈՒԹԻ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումների ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացումը նպաստում է հանրապետությունում անասնահամաճարակային իրավիճակի ապահովմանը և վերահսկմանը, ինչպես նաև կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի անվտանգության բարելավմանը:

2. Կենդանիների առողջության (այսուհետ՝ ԿԱՀԿ) և Առողջապահության համաշխարհային (այսուհետ՝ ԱՀԿ) կազմակերպությունների կողմից հաշվարկված են կենդանիների և մարդու համար ընդհանուր ավելի քան 200 վարակիչ (զոոնոզ) հիվանդություններ:

3. Դեռևս 1984 թվականից ԿԱՀԿ-ի և ԱՀԿ-ի կողմից կենդանիների վարակիչ հիվանդությունները, հարուցչի ախտածնությամբ պայմանավորված, բաժանվում են 3 խմբի (A, B, C), վերջիններս յուրաքանչյուր տարի ԿԱՀԿ-ի կողմից կարող են փոփոխվել՝ կախված տվյալ երկրի անասնահամաճարակային իրավիճակից, հիվանդության դեմ ուղղված պայքարի համալիր միջոցառումներից:

4. Հայաստանի Հանրապետությունը ԿԱՀԿ-ի լիիրավ անդամ երկիր է, և համաձայն «Անասնաբուժության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի՝ հանրապետությունում արձանագրված վարակիչ հիվանդությունների միջազգային ծանուցումն իրականացվում է սահմանված ընթացակարգով:

5. Ծրագրի շարունակական իրականացումը նպաստում է անասնաբուժության ոլորտի զարգացմանը՝ լաբորատոր ախտորոշման, անասնահամաճարակային

վիճակի դաշտային ուսումնասիրության, կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննությունների ուղղություններով:

2. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

6. Ծրագրի իրականացման շարունակականությունն ապահովում են՝

1) անասնաբուժական դեղամիջոցների՝ հիվանդությունների հարուցիչների ախտորոշման և նույնականացման հավաքածուների առկայությունը.

2) ֆինանսական միջոցների տրամադրումը.

3) լաբորատոր անասնաբույժ - մասնագետների համալրումը:

7. Ծրագրի իրականացման անհրաժեշտությունը միտված է՝

1) անասնահամաճարակային իրավիճակի բարելավմանը և վերահսկմանը.

2) կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի անվտանգության ապահովմանը.

3) բնակչության շրջանում կենդանիների և մարդկանց համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների դեպքերի կանխարգելմանը:

8. Հանրապետությունում, ինչպես նաև տարածաշրջանում անասնահամաճարակային իրավիճակի բարելավման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի անվտանգության ապահովման նպատակով ծրագիրն անհրաժեշտ է իրականացնել շարունակական:

3. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

9. Ծրագրի իրականացման նպատակն է՝

1) կանխարգելել կենդանիների, կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների դեպքերը՝ լաբորատոր ախտորոշման և փորձաքննության միջոցով.

2) կառավարել հնարավոր վարակիչ հիվանդությունների ներթափանցման ռիսկերը.

3) պաշտպանել բնակչությանը կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից:

4. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

10. Ծրագրի իրականացումը վերապահված է Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ կազմակերպություն)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 13-ի N 103-Ն որոշման համաձայն:

11. Ծրագրի շրջանակներում լաբորատոր գործունեությունը ներառում է՝

1) մի շարք վարակիչ հիվանդությունների՝ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների բրուցելոզի, խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլոզի, լեյկոզի, ձիերի խլնախտի, խոշոր և մանր եղջերավոր կենդանիների և ձիերի սիբիրախտի, խոշոր և մանր եղջերավոր կենդանիների դաբաղի, խոշոր եղջերավոր կենդանիների խշխշան պալարի, այդ թվում՝ թռչունների, մուշտակամորթ գազանների, ձկների և մեղուների վարակիչ հիվանդությունների լաբորատոր ախտորոշում:

2) փորձաքննության ենթակա կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննություն:

12. Ծրագրում ներառված վարակիչ հիվանդությունների նկատմամբ լաբորատոր ախտորոշիչ միջոցառումները յուրաքանչյուր տարի կարող են փոփոխվել՝ ելնելով հարևան երկրներում, ինչպես նաև հանրապետության առանձին մարզերում արձանագրված դեպքերից:

13. Լաբորատոր ախտորոշիչ միջոցառումներն իրականացվում են «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում միջնաժամկետ ծախսային ծրագրով հաստատված ժամկետներում և պարբերականությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության

տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) տեսուչի կողմից՝ վարակիչ հիվանդությունների կասկածի դեպքում:

14. Կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննություններն իրականացվում են տեսչական մարմին տեսուչի կողմից. վարակիչ հիվանդությունների կասկածի դեպքում հիվանդության ախտորոշումը հաստատելու կամ հերքելու նպատակով կատարում է նմուշառում և ախտաբանական հումքի կամ նյութի նմուշները ներկայացնում կազմակերպություն:

15. «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում, վարակիչ հիվանդությունների ախտորոշման նպատակով, «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անասնաբույժը հանձնման-ընդունման թերթիկով՝ N 1 ձևի համաձայն, նախնական լաբորատոր ախտորոշում՝ թեստավորում իրականացնելու նպատակով՝ արյան նմուշները հանձնում է կազմակերպության լաբորատոր մասնագետին:

Ձև N 1

_____ 202 թվականի

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԹԵՐԹԻԿ
 «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՊԱՏՎԱՍՏՈՒՄ»
 ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՐՅԱՆ ՆՄՈՒՇՆԵՐԻ

NN ը/կ	Նմուշի նույնա- կանաց- ման համարը	Մարզ/ տարածաշրջան	Համայնք /քնակավայր	Անասնատիրոջ տվյալները, անունը, ազգանունը	Կենդանու		
					նույնականացման մեթոդը	միտոսը	մարդ
1	2	3	4	5	6	7	8

Անասնաբույժը հանձնեց՝ _____
 (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Ստացավ՝ _____
 (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

16. Բրուցելոզ հիվանդության նկատմամբ թեստավորված կասկածելի՝ «կեղծ դրական» հակազդած, ինչպես նաև լեյկոզ հիվանդությունն ախտորոշելու նպատակով՝ արյան նմուշները տեսչական մարմնի մարզային կենտրոնի տեսուչը հանձնման-ընդունման ուղեգրով՝ N 2 ձևի համաձայն, հանձնում է կազմակերպության լաբորատորիա՝ հիվանդության ախտորոշումը հաստատելու կամ հերքելու նպատակով:

Ձև N 2

_____ 202 թվականի

ՈՒՂԵԳԻՐ

ԲՐՈՒՑԵԼՈԶ/ ԼԵՅԿՈԶ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ԱՐՅԱՆ ՆՄՈՒՇՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

NN ը/կ	Նմուշի նույնա- կանաց- ման համարը	Մարզ/ տարածաշրջան	Համայնք /քնակավայր	Անասնատիրոջ տվյալները, անունը, ազգանունը	Շտաբային հիվանդության անվանումը	Կենդանու		
						նույնականացման համարը	միտոքոն տեսակը	մեջը
1	2	3	4	5	6	7	8	9

Տեսուչը հանձնեց՝ _____
 (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Ստացավ՝ _____
 (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

17. Լաբորատոր ախտորոշման արդյունքները երեք աշխատանքային օրվա ընթացքում հաստատվելուց կամ հերքվելուց հետո կազմակերպությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում արձանագրությունը տրամադրում է տեսչական մարմնին՝ N 3 ձևի համաձայն:

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԵՎ
ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

քաղ. Երևան, Էրեբունի 12

_____ 202 թվականի

Հաստատում եմ՝ _____

(անունը, ազգանունը)

_____ (ստորագրությունը)

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N

ԲՐՈՒՑԵԼՈՋ/ ԼԵՅԿՈՋ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ

NN ը/կ	Նմուշի նույնա- կանաց- ման համարը	Մարզ/ տարածա- շրջան	Համայնք /քնակավայր	Տեսակարարի Անունը, ազգանունը	Կենդանու նույնականացման համարը	Ախտորոշման արդյունքերը			
						Բրուցելոզ դրական	Բրուցելոզ բացասական	Լեյկոզ դրական	Լեյկոզ բացասական
1	2	3	4	5	6	7	8	9	10

ախտորոշման պատասխանատու(ներ)՝ _____

(անունը, ազգանունը)

_____ (ստորագրությունը)

18. Տեսչական մարմնի մարզային կենտրոնի տեսուչը մեկ աշխատանքային օրվա ընթացքում դրական հակազդած նմուշների վերաբերյալ գրավոր տեղեկացնում է «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության մարզային մասնաճյուղի համաճարակաբանին՝ անասնաբուժասանիտարական համալիր միջոցառումներ իրականացնելու նպատակով:

19. Տեսչական մարմնի մարզային կենտրոնի տեսուչը ծրագրի շրջանակներում կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության ենթակա նմուշները հանձնման-ընդունման ուղեգրով՝ N 4 ձևի համաձայն, հանձնում է կազմակերպության լաբորատորիա՝ հիվանդության ախտորոշումը հաստատելու կամ հերքելու նպատակով:

Ձև N 4

ՈՒՂԵԳԻՐ

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՀՈՒՄՔԻ ԵՎ ՆՅՈՒԹԻ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՆՄՈՒՇՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

_____ 202 թվականի

NN ը/կ	Նմուշի նույնա- կանաց- ման համարը	Մարզ/ տարածաշրջան	Համայնք /բնակավայր	Տեսչական կենտրոն, Անունը, ազգանունը	Կենդանու տվյալները				Կատարող նյութի համարը
					կ/ տեսակ	հաս	ժամ	նյութի նույնանունը	
1	2	3	4	5	7	8	9	10	11

Տեսուչը հանձնեց՝ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Ստացավ՝ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

20. Լաբորատոր փորձաքննության արդյունքները հաստատվելուց կամ հերքվելուց հետո կազմակերպությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում արձանագրությունը տրամադրում է տեսչական մարմնին՝ N 5 ձևի համաձայն:

Ձև N 5

**«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԵՎ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

քաղ. Երևան, Էրեբունի 12

_____ 202 թվականի

Հաստատում եմ՝ _____
(անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ԿԵՆԴՐԱՆԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՀՈՒՄՔԻ ԵՎ ՆՅՈՒԹԻ ԼԱԲՈՐԱՏՈՐ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

NN ը/կ	Նմուշի նույնա- կա- նաց- ման համար	Մարզ/ տարածաշրջան	Համայնք /քնակավայր	Տնտեսավարողի անուն, մ. ազգանունը	Կենդանու տվյալները				Մեղքի գրգռման փուլի համար
					կ/ տեսիլ	ճյուղ	ժանր	նույնականացման մեղքի համար	
1	2	3	4	5	7	8	9	10	11

պատասխանատու(ներ)՝ _____
(անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

21. Կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության իրականացման ժամկետները պայմանավորված են փորձաքննության մեթոդաբանությամբ, և դրանց նկատմամբ հսկողությունը սահմանվում է կազմակերպության ներքին իրավական ակտերով:

22. Կազմակերպությունն իրականացված միջոցառումների վերաբերյալ եռամսյակային և տարեկան աճողական հաշվետվությունները մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 10-ը, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվությունը ներկայացնում է տեսչական մարմին՝ մինչև դեկտեմբերի 2-րդ տասնօրյակը:

5. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ՌԻՍԿԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՂԻՆԵՐԸ

23. Ծրագրի իրականացման ռիսկերն են՝

1) անասնաբուժական դեղամիջոցների՝ հիվանդությունների հարուցիչների ախտորոշման և նույնականացման հավաքածուների ձեռքբերման գործընթացի ձախողում՝ պայմանավորված գների բարձրացման կամ արտակարգ իրավիճակների առաջացման հետևանքով.

2) ֆինանսավորման դադարեցումը կամ նվազումը.

3) «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում վարակիչ հիվանդությունների ախտորոշման նպատակով արյունատման թերակատարումը:

24. Ծրագրի ռիսկերի հաղթահարման հնարավոր ուղիներն են՝

1) յուրաքանչյուր տարի «Պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ծրագրի գծով սահմանվող անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացումը.

2) անասնաբուժական դեղամիջոցների՝ հիվանդությունների հարուցիչների ախտորոշման և նույնականացման հավաքածուների ձեռքբերումը:

6. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

25. Ծրագիրն իրականացվում է յուրաքանչյուր տարի «Պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ծրագրի գծով սահմանվող միջոցների հաշվին:

26. Ծրագրի ֆինանսական բաղադրիչ է փորձաքննությունը՝ (հատ) կենդանիների հիվանդությունների (այդ թվում՝ թռչունների, մուշտակամորթ գազանների, ձկների և մեղուների) լաբորատոր ախտորոշման, կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության իրականացման միջոցով:

7. ԾՐԱԳՐԻ ԱԿՆԿԱՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

27. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է՝

1) հանրապետությունում կենդանիների վարակիչ հիվանդությունների նկատմամբ կայուն անասնահամաճարակային վիճակի բարելավում և վերահսկում.

2) անասնաբուժասանիտարական տեսակետից բարձրորակ կենդանական ծագում ունեցող հումքի և մթերքի արտադրության արտահանման և ներկրման գործընթացի խթանում, կայուն միջպետական տնտեսական կապերի հաստատում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ